

## ՀՀ Բանկային համակարգի շահութաբերության վերլուծություն

*Ռաֆայել Պետրոսյան*

*Հանգուցային բառեր. ֆինանսական համակարգ, շուկայական վերլուծություն, բանկային շուկայի միտումներ, ֆինանսական ցուցանիշներ, համախառն ակտիվներ, ընդամենը կապիտալ, վարկ*

### Նախաբան

Բանկային համակարգը համարվում է տնտեսության կարևորագույն օղակներից մեկը: Համաշխարհային բանկային շուկայի կապիտալիզացիան 2020 թվականին գնահատվում է 21,5 տրլն. ԱՄՆ դոլլար: 2019 թ. 29,2 տրլն համեմատությամբ այն նվազել է 26,4 %-ով: Անկումը մեծ մասամբ պայմանավորված է COVID-19 համավարակով, որը հարվածեց համաշխարհային տնտեսության գրեթե բոլոր ճյուղերին:

Բանկերի հիմնական գործունեության տեսակներն են՝ մանրածախ, անհատական, հարստության կառավարում, փոքր գործարարությանն ուղղված ծառայություններ՝ հաշիվներ և վարկային գծեր, միջին և խոշոր գործարարությանը, ինստիտուցիոնալ հաճախորդներին ուղղված ծառայություններ, ներդրումային բանկինգ և այլն:

Շուկայում առկա է ապրանքների և ծառայությունների տարբերակում վճարների, տոկոսադրույքների, վարկային սահմանաչափերի, ծանուցման ժամկետների, հաճախորդների հարմարավետության, ապրանքների և ծառայությունների ընդհանուր որակի և տեսակների եղանակով: Շուկան բնութագրվում է մուտքի բարձր խոչընդոտներով ինչպես ֆինանսական, այնպես էլ օրենսդրական և կարգավորման առումով: Անցումային ծախսերը (switching costs) այլ շուկաների համեմատությամբ ցածր են, ինչը շուկայում ստեղծում է բարձր մրցակցային միջավայր: Չնայած հաճախորդների բացասական վերաբերմունքին՝ բանկերին հաջողվում է պահպանել ծառայությունների դիմաց վճարների ու միջնորդավճարների սահմանված չափը՝ ներգրավելով նոր հաճախորդներին: Նրանց աշխուժությունը խթանելու համար բանկերը ստիպված են առաջարկել մրցակցային ապրանքներ և ծառայություններ: Բանկերը նաև փորձում են ներգրավել այլ բանկերի հաճախորդների տարբեր հաշիվները. դա կոչվում է relationship banking: Բանկային շուկայում տարածում են գտնում նաև վարկային միությունները՝ որպես այլընտրանք բանկերին:

Բանկերի շուկայավարական բաժինները հիմնականում հատութավորված (սեգմենտավորված) են՝ ըստ հաճախորդների տեսակների, քանի որ տարբեր հատույթների (սեգմենտների) պարագայում շուկայավարական ռազմավարությունները խիստ տարբերվում են: Բանկերը շարունակում են օգտագործել գովազդի դասական հարթակները՝ հեռուստատեսային գովազդ, գովազդային վահանակ: Լայն տարածում են գտնում նոր լրատվադաշտերի միջոցով գովազդները՝ համացանցը, հանրային ցանցերը, էլեկտրոնային փոստը և այլն: Չնայած հանրային հարթակների անսխառեպ զարգացմանը՝ կան խոշոր բանկեր, որոնք շարունակում են կիրառել դասական գովազդային հարթակները:

Բանկերը պահպանում են իրենց հաճախորդներին զեղչերի, նվազող վճարների և միջնորդավճարների միջոցով՝ ստեղծելով օրինապահ հաճախորդների հենարան: Հաճախորդի համար բանկի ընտրության հարցում խիստ կարևոր գործոն են դառնում ապրանքներից և ծառայություններից օգտվելու հարմարավետությունը և բազմագործառու-կանությունը:

Համավարակով պայմանավորված՝ ավելի ընդգծվեց համացանց և մոբայլ բանկինգի, բանկային հավելվածների կարևորությունը, քանի որ ինչպես տնտեսության բազմաթիվ ճյուղերում, բանկային ոլորտում նույնպես անցում կատարվեց հեռավար աշխատանքի:

Նոր տեխնոլոգիաները շատ արագ շարունակում են կիրառվել բանկային ողջ շուկայում: Հաճախորդներին սպասարկելու համար առաջարկվում են ծրագրային ապահովումներ՝ մոբայլ հավելվածներ, համացանց բանկինգ և այլն, վարքագծային շուկայավարություն՝ մեծ տվյալների վերլուծությունների, արհեստական բանականության միջոցով հաճախորդների վարքագծի հիման վրա առաջարկվող ապրանքներ և ծառայություններ:

Շուկայի նշանակալի միտումներից են<sup>1</sup>

- Europay, MasterCard և Visa (EMV) տեխնոլոգիաների որդեգրման աճը,
- բանկերի կողմից թվային վարկավորումը,
- մեծ տվյալների ներդրումը,
- միաձուլումներն ու ձեռքբերումները:

---

<sup>1</sup> St u The business research company, Financial Services Global Market Briefing 2021: Covid 19 Impact and Recovery, 2021:

## Վերլուծություն

Ֆինանսական ծառայությունների շուկայում, ըստ ծավալի, առաջատար տարածաշրջանը Արևմտյան Եվրոպան է, որին հաջորդում են Հյուսիսային Ամերիկան, Ասիան և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները, Հարավային Ամերիկան, Մերձավոր Արևելքը, Արևելյան Եվրոպան, Աֆրիկան:

Համաշխարհային ֆինանսական շուկայի հիմնական խաղացողներն են՝ Allianz Group, Axa Group, Ping an Insurance, JPMorgan Chase & Co., Anthem Inc., Aviva plc, China Construction Bank, Legal & General Group plc, Industrial and Commercial Bank of China, Agricultural Bank of China և այլն: Նշված կազմակերպությունները, բանկային գործունեությունից բացի, ֆինանսական շուկայում ունեն նաև այլ գործառույթներ:

Համաշխարհային մակարդակում, ըստ ակտիվների, 2019 թվականի խոշորագույն բանկերն են՝<sup>2</sup>

- Industrial & Commercial Bank of China Limited (China)
- China Construction Bank Corporation (China)
- Agricultural Bank of China Limited (China)
- Bank of China Limited (China)
- BNP Paribas SA (France)
- China Development Bank (China)
- JPMorgan Chase Bank National Association (U.S.)
- MUFG Bank (Japan)
- Credit Agricole SA (France)
- Japan Post Bank Co Ltd (Japan)

ՀՀ-ում ֆինանսական և ապահովագրական գործունեության ավելացված արժեքը 2020 թվականին կազմել է 415 940 000 000 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.8 %-ով:

Մինչև COVID-19 համավարակի տարածումը Հայաստանն աստիճանական առաջընթաց էր արձանագրում՝ գործարար միջավայրում իրականացնելով խոհեմ մակրոտնտեսական քաղաքականություն: Առկա էր արագ տնտեսական աճ՝ 6.8 % 2017-2019 թթ. ընթացքում: Համավարակը և Ադրբեյջանի հետ ռազմական բախումը լուրջ ազդեցություն ունեցան ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի վրա: 2020 թ. երկիրն արձանագրեց ՀՆԱ-ի <sup>3</sup> 7.6 %-ի անկում:


---

<sup>2</sup> Տե՛ս [www.statista.com](http://www.statista.com):

<sup>3</sup> Տե՛ս The World Bank, Overview of the Republic of Armenia, 2021, <https://www.worldbank.org/en/country/armenia>:

2020 թվականին ֆինանսական և ապահովագրական գործունեությունից ստացված համախառն ներքին արդյունքն ընթացիկ գներով կազմել է 415,939,800,000 դրամ՝ 6,183,742,100,000 դրամ ՀՆԱ-ի պարագայում: 2019 թվականի համեմատությամբ այն աճել է 7.71 %-ով: Իրական ծավալի ցուցիչը 2020 թվականին կազմել է 107.8, իսկ վերջին 5 տարիների ընթացքում իրական ծավալի ցուցչի միջին արժեքը կազմել է 114.96:


1-ին գծապատկերում պատկերված են ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի անվանական ՀՆԱ ցուցանիշները 2012-2020 թթ. ժամանակահատվածում: Նկատելի է, որ 2015 թվականից ոլորտի անվանական ՀՆԱ-ն արձանագրում է նշանակալի աճ<sup>4</sup>:



**Գծապատկեր 1. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն, ՀՆԱ ընթացիկ գներով**

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկ, Իրական հատվածի վիճակագրություն, Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի բաղադրատարրերը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի 2-րդ խմբագրության (ՏԳՏՀԴ Խմբ. 2):

Ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ որպես տնտեսության առանձին ճյուղ, կարևոր դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքում: Վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականին կազմել է 6.7 %՝ զիջելով ընդամենը 5 ճյուղի՝ շինարարություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, մշակվող արդյունաբերություն: Այն նշանակալի աճ է արձանագրել վերջին հինգ տարվա ընթացքում:



**Գծապատկեր 2 Ֆինանսական և ապահովագրական գործունեության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում**

COVID-19 համավարակի և պատերազմական իրավիճակի հետևանքով ինչպես տնտեսության բոլոր ճյուղերում, այնպես էլ ֆինանսական ոլորտում ակնկալվում էր աճի տեմպի անկում, վատագույն դեպքում՝ ՀՆԱ-ի անկում: Սակայն, չնայած ճգնաժամային իրավիճակներին, ֆինանսական ոլորտում էական ցնցումներ չարձանագրվեցին<sup>5</sup>:

ՀՀ-ում գործող 17 բանկերի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա սույն բաժնում հաշվարկվել են ՀՀ ֆինանսական համակարգի ցուցանիշները 2018 և 2019 թվականների համար:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների հիման վրա հաշվարկված ցուցանիշները ներկայացված են 1-ին աղյուսակում:

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն (2020 թ. 1-ին եռ. – 2020 թ. 4-րդ եռ.), 2020:

**ՀՀ բանկային համակարգի համախառն ցուցանիշներ<sup>6</sup>**

	2018	2019	Տարեկան աճի տեմպ
Համախառն ակտիվներ	AMD 4,909,439,648.00	AMD 5,751,563,604.00	17.15 %
Հաճախորդներին տրված վարկեր	AMD 3,053,482,816.00	AMD 3,543,530,433.00	16.05 %
Համախառն պարտավորություններ	AMD 4,164,286,399.00	AMD 4,917,428,144.00	18.09 %
Ընդամենը կապիտալ	AMD 745,153,249.00	AMD 807,506,160.00	8.37 %
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով	AMD 379,238,137.00	AMD 432,863,438.00	14.14 %
Տոկոսային ծախս	AMD 197,003,508.00	AMD 220,623,841.00	11.99 %
Շահույթ՝ մինչև շահութահարկ	AMD 70,610,670.00	AMD 96,367,682.00	36.48 %
Զուտ շահույթ	AMD 53,857,146.00	AMD 74,719,471.00	38.74 %

2021 թ. դրությամբ ՀՀ-ում բանկերի թիվը հասնում է 17-ի:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը հիմնադրվում են որպես բաժնետիրական ընկերություն, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կամ կոոպերատիվ բանկ: Ինչպես կարելի է նկատել բանկերի լրիվ անվանումներից, բանկերի հիմնական կազմակերպարարական ձևը փակ բաժնետիրական ընկերությունն է (12): Բաց բաժնետիրական

<sup>6</sup> Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները ՀՀ բանկերի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

ընկերություններ են 4-ը, իսկ ՍՊԸ և կոոպերատիվ բանկեր այս պահին առկա չեն:

Ըստ համախառն ակտիվների՝ ՀՀ ամենախոշոր 5 բանկերն են՝

- ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
- ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
- ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
- ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
- ԻՆՆԿՈՒՄԲԱՆԿ ՓԲԸ

Ըստ հաճախորդներին տրամադրած վարկերի ցուցանիշի՝ նույնպես առաջատար բանկերն ամենախոշորն են: Հիմնական միջոցների ցուցանիշով առաջատարը ԱԿԲԱ բանկն է, որին հետևում են ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ-ն, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ-ն, ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ՓԲԸ-ն, ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ն:


Ժամանակի ընթացքում նվազում է հիմնական միջոցների դերը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ բանկային և ֆինանսական: Եթե նախկինում ֆիզիկական ակտիվները՝ շենքեր, շինություններ, մասնաճյուղերի քանակ, կարևոր դեր էին խաղում բանկի մրցունակության համար, ապա այժմ դրանց դերը միանշանակ չէ: Ավելի բարձր մրցունակություն են ձեռք բերում նոր սերնդի բանկերը՝ հիմնված ոչ նյութական ակտիվների վրա: Մարդիկ կարևորում են բանկային հավելվածները, համացանցի, մոբայլ բանկինգի հնարավորությունները, և այդ առումով բանկերն ավելի շատ ներդրումներ են կատարում ոչ նյութական և ոչ ֆիզիկական ակտիվներում: Հարց է առաջանում՝ արդյոք ֆիզիկական ակտիվները ազդեցություն ունեն շահութաբերության ցուցանիշների վրա<sup>7</sup>:

Ստորև գծապատկերում ներկայացված են բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները՝ որպես տոկոսային եկամտի մասնաբաժին<sup>8</sup>:

---

<sup>7</sup> Stéu Daniela Cristina Solomon, Mircea Muntean, Assessment of Financial Risk in Firm's Profitability Analysis, 2012, էջ 5-8:

<sup>8</sup> Ցուցանիշները հաշվարկել են հեղինակները ՀՀ բանկերի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:



**Գծապատկեր 3. Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշներ**

Բանկերի ֆինանսական ցուցանիշների հիման վրա հաշվարկվել են ՀՀ բանկային շուկայի շահութաբերության միջակայքերը, իսկ 1-ին հավելվածում ներկայացված են բանկերի համապատասխան ցուցանիշները, որոնց հիման վրա էլ կատարվել են հաշվարկները<sup>9</sup>:

<sup>9</sup> St´u Victor Chukwunweike, The Impact of Liquidity on Profitability of Some Selected Companies: The Financial Statement Analysis (FSA) Approach, 2014:



**ՀՀ բանկային համակարգի՝ 2018, 2019 և 2018-2019 թթ.  
շահութաբերության ցուցանիշները**

<b>Գործառնական շահույթ/հասույթ</b>	<b>2018</b>	<b>2019</b>
մինիմում	-17.22%	-6.89%
ստորին քվարտիլ	7.40%	18.18%
մեդիանա	22.98%	24.08%
վերին քվարտիլ	31.50%	31.31%
մաքսիմում	76.92%	76.73%

<b>Զուտ տոկոսային եկամուտ / Հասույթ</b>	<b>2018</b>	<b>2019</b>
մինիմում	20.66%	27.73%
ստորին քվարտիլ	42.20%	42.48%
մեդիանա	51.72%	52.39%
վերին քվարտիլ	60.19%	61.94%
մաքսիմում	96.36%	98.10%

<b>Ծախսերի նկատմամբ հավելագին</b>	<b>2018</b>	<b>2019</b>
մինիմում	-15.53%	-6.18%
ստորին քվարտիլ	5.14%	16.68%
մեդիանա	23.10%	22.88%
վերին քվարտիլ	33.70%	33.37%
մաքսիմում	152.54%	151.73%

<b>2018-2019</b>	<b>Գործառնական շահույթ/ Turnover</b>	<b>Զուտ տոկոսային եկամուտ/ Հասույթ</b>	<b>Ծախսերի նկատմամբ հավելագին</b>
մինիմում	-17.2%	20.7%	-15.5%
ստորին քվարտիլ	13.4%	42.8%	11.8%
մեդիանա	23.5%	52.2%	23.0%
վերին քվարտիլ	30.5%	61.4%	32.0%
մաքսիմում	76.9%	98.1%	152.5%

## Եզրակացություն

Վերջին երկու տարվա ընթացքում համաշխարհային շուկայի վրա ազդող հիմնական գործոնը ակնհայտորեն ՔՈՎԻԴ-19 համավարակն է, որը տարբեր ազդեցություններ է ունեցել բանկային համակարգի վրա: Շուկայում առկա են ապրանքների և ծառայությունների տարբերակներ՝ ըստ տարբեր գործոնների՝ վճարներ, տոկոսադրույքներ, վարկային սահմանաչափեր, ծանուցման ժամկետներ, հաճախորդների հարմարավետություն, ապրանքների և ծառայությունների ընդհանուր որակ և տեսակ: Բանկերի մարքեթինգային բաժինները հիմնականում հատուցվող վաճառված են՝ ըստ հաճախորդների տեսակների, քանի որ շուկայավարական ռազմավարությունները խիստ տարբերվում են տարբեր հատույթների պարագայում: Շուկայում արագ զարգանում են նոր տեխնոլոգիաներ: Հաճախորդների սպասարկման համար խիստ կարևորություն են ստացել ծրագրային ապահովումները՝ մոբայլ հավելվածներ, համացանց բանկինգ և այլն: 2018-2019 թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում շուկայի շահութաբերությունը, ըստ գործառնական շահույթ/հասույթ ցուցանիշի, կազմել է 23.5 %: Ստորին և վերին քվարտիլները կազմել են համապատասխանաբար 13.4 % և 30.5 %, իսկ մաքսիմում և մինիմում արժեքները՝ համապատասխանաբար 17.2 % և 76.9 %: Շուկայի շահութաբերությունը, ըստ զուտ տոկոսային եկամուտ/հասույթ ցուցանիշի, կազմել է 52.2 %: Ստորին և վերին քվարտիլները կազմել են համապատասխանաբար 42.8 % և 61.4 %, իսկ մինիմում և մաքսիմում արժեքները՝ համապատասխանաբար 20.7 % և 98.1 %: Շուկայի շահութաբերությունը, ըստ ծախսերի նկատմամբ հավելագնի, կազմել է 23.0 %: Ստորին և վերին քվարտիլները կազմել են համապատասխանաբար 11.8 % և 32.0 %, իսկ մաքսիմում և մինիմում արժեքները՝ համապատասխանաբար 152.5 % և -15.5 %:

*Հավելված 1*

Բանկի անվանում	Գործառնական շահույթ/ Turnover		Զուտ տոկոսային եկամուտ/ Հասույթ		Ծախսերի նկատմամբ հավելագին	
	2018	2019	2018	2019	2018	2019
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	26.48%	24.08%	58.28%	56.10%	25.77%	22.88%
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	25.16%	26.99%	51.61%	52.39%	24.74%	25.75%
«Այդի Բանկ» ՓԲԸ	24.86%	25.51%	61.23%	61.93%	23.10%	26.16%
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	7.51%	17.58%	43.97%	43.06%	3.36%	16.36%
«Արդյնիբանկ» ՓԲԸ	16.68%	21.93%	40.10%	40.79%	15.19%	20.15%
«Արմավիբանկ» ՓԲԸ	34.67%	47.02%	40.43%	37.70%	38.29%	60.17%
«Արցախբանկ» ՓԲԸ	50.74%	44.88%	51.25%	55.39%	68.62%	56.46%
«ԲԻԲՆՈՍ Բանկ Արմենիա» ՓԲԸ	22.98%	28.83%	35.95%	41.91%	23.62%	29.14%
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	6.26%	21.28%	66.75%	74.17%	5.40%	19.78%
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	16.08%	18.78%	51.72%	50.84%	14.03%	17.00%
«Ինեկոբանկ» ՓԲԸ	33.47%	33.57%	59.16%	61.95%	37.02%	37.28%
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	29.53%	29.05%	54.63%	54.05%	30.37%	29.45%
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	2.85%	6.96%	20.66%	27.73%	2.09%	5.22%
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	15.02%	21.16%	49.49%	46.92%	13.33%	18.55%
«Մելլաթ Բանկ» ՓԲԸ	76.92%	76.73%	96.36%	98.10%	152.54%	151.73%
«Յոնիբանկ» ԲԲԸ	7.28%	8.36%	52.57%	52.06%	4.88%	7.31%
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	-17.22%	-6.89%	67.04%	64.47%	-15.53%	-6.18%

# Анализ доходности банковской системы Республики Армения

*Рафаэль Петросян*

## Резюме

*Ключевые слова:* финансовая система, анализ рынка, тенденции банковского рынка, финансовые показатели, валовые активы, общий капитал, кредит

### *Цели статьи:*

- проанализировать банковский сектор Армении и глобальный банковский сектор,
- рассчитать финансовые показатели на 2018 и 2019 годы, характеризующие банковскую систему Республики Армения,
- оценить рентабельность банковской системы РА.

В рамках статьи были рассчитаны финансовые показатели, характеризующие банковскую систему: операционная выручка к обороту, чистая выручка к обороту, операционная выручка к общим расходам и активам. Операционной выручкой считалась прибыль до вычета процентов и налогов. Рыночные диапазоны строятся на основе финансовых показателей.

В рамках анализа были описаны структура рынка, конкуренция, рыночные тенденции, политические, экономические, социальные, технологические, экологические и законодательные факторы, влияющие на рынок.

В рамках статьи рассчитывались абсолютные финансовые показатели, характеризующие банковскую систему: валовые активы, кредиты клиентам, валовые обязательства, совокупный капитал. Были получены годовые темпы роста указанных показателей.

Для оценки рентабельности банковской системы были рассчитаны следующие показатели рентабельности: операционная прибыль к обороту, чистая прибыль к обороту, чистый процентный доход к обороту, операционная прибыль к общим расходам, операционная прибыль к активам. Операционной прибылью считалась прибыль до налогообложения процентов (операционная прибыль). Построены рыночные диапазоны показателей рентабельности.

# Profitability Analysis of the Banking System of Republic of Armenia

*Rafayel Petrosyan*

## Summary

**Key words:** *financial system, industry analysis, banking industry trends, financial indicators, total assets, overall capital, loan*

The purposes of the article are the following:

- analyse Armenia's and global banking industry,
- calculate financial indicators for 2018 and 2019 years, characterizing the banking system of the Republic of Armenia,
- evaluate profitability of the Armenian banking system.

Withing the framework of the article financial indicators characterizing the banking system were calculated: operational revenue to turnover, net revenue to turnover, operational revenue to overall expenditures and assets. Operational revenue is the profit before interest and tax. Market ranges are constructed based on financial indicators.

Within the framework of the analysis the market structure, competition, market trends, political, economic, social, technological, environmental and legislative factors that affect the market were described.

Within the framework of the article, absolute financial indicators characterizing the banking system were calculated: gross assets, loans to customers, gross liabilities, total capital. The annual growth rates of the indicators have been obtained.

In order to assess the profitability of the banking system, the following profitability indicators were calculated: operating profit to turnover, net profit to turnover, net interest income to turnover, operating profit to overall expenses, operating profit to assets. Operating profit was considered to be profit before tax, interest (operating profit). Market ranges of profitability indicators have been constructed.

Ներկայացվել է 11.05.2021 թ.

Գրախոսվել է 18.05.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.